Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2023.
<<Մալիշկա և Գետափ գյուղերում ոռոգման ցանցի ստեղծման ծրագիր»
Երևան՝ 16 Հոկտեմբերի, 2024թ

2024 թվականի հոկտեմբերի 16-ին Վայոց ձորի մարզի Մալիշկա գյուղում տեղի ունեցավ <<Մալիշկա և Գետափ գյուղերի ոռոգման ցանցի ստեղծման ծրագրի>> ավարտական արարողությունը:

Արարողությանը ներկա էին Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն ԱՕԿԻ Յուտական, Վայոց ձորի մարզպետ պարոն Միքաելյանը, Եղեգնաձորի համայնքապետ պարոն Հարությունյանը, Եղեգնաձորի համայնքապետի տեղակալ պարոն Բաբայանը, Մալիշկա գյուղի ղեկավար պարոն Նազարյանը, ինչպես նաև տեղի բնակիչներ և այլ շահագրգիռ կողմեր:

Այս ծրագրի նպատակն էր վերանորոգել Վայոց ձորի մարզի Մալիշկա և Գետափ գյուղերի մոտ 898 մետր գյուղատնտեսական ջրանցքները (մոտ 698 մ Մալիշկա և 200 մ Գետափում): Այս ծրագրի արդյունքում ջուրը կբաշխվի երկու գյուղերի գյուղատնտեսական հողատարածքներում՝ ոռոգելի դարձնելով մոտ 130 հեկտար նոր հողատարածք: Բացի այդ, յուրաքանչյուր գյուղում առկա ոռոգման ջրի ծավալը (րոպեում) միջինը մոտ 720 լիտրից (Մալիշկա) և 2400 լիտրից (Գետափ) կհասնի համապատասխանաբար մոտ 2400 լիտրի և 4500 լիտրի՝ բարելավելով գյուղատնտեսության արտադրողականությունը:

Ավելին, ծրագրի արդյունքում նվազագույնի է հասել ջրի արտահոսքը՝ խթանելով ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, կանխելով ոռոգման ջրից բնակավայրերի հեղեղումները և ոռոգման անբավարար ենթակառուցվածքի հետևանքով առաջացած առողջական խնդիրները, այսպիսով ընդհանուր առմամբ բարելավվել են երկու գյուղերում բնակվող ընդհանուր առմամբ 7085 (4778 Մալիշկայում և 2307 Գետափում) աշխատանքային և կենցաղային պայմանները::

Մարզպետ Միքաելյանը իր երախտագիտությունը հայտնեց՝ նշելով. «Մենք անկեղծորեն շնորհակալություն ենք հայտնում Ճապոնիայի կառավարությանը առատաձեռն աջակցության համար: Այս ծրագիրը մեծապես կնպաստի մեր տարածաշրջանի գյուղատնտեսության զարգացմանը՝ հատկապես խաղողի արտադրության արդյունավետության բարձրացմանը և մեր բնակիչների կյանքի բարելավմանը: Հուսով ենք: որ Ճապոնիայի և Հայաստանի միջև բարեկամական հարաբերությունները կշարունակեն խորանալ ապագայում»:

Դեսպան Առկին շնորհավորեց ներկաներին

Ծրագրային վահանակի բացում

Ծրագրի ներգրավված կողմերը մեկ նկարում

Եղեգնաձորի համայնքապետ Պարոն Հարությունյանը երախտիքի խոսքեր ուղղեց դեսպան Առկիին